

— Հրցելիսան գ.

Վայդ հիւնց-ովուշկուր

634.8
9 - 91

Երևան
1930.

24 SEP 2010

Խ 7 (96) ԳՅՈՒՂԱՏԵՍԻՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՍՏԵԼԻ Խ 7 (98)
ԲԽ. № 64 ԳՐԱԴԱՐԱՆ

Վ Հ 2092.


ՀՀԸ. Կ. Խ.

Գ. ԳՐՁԵԼՅԱՆ

59

ՎԱԶԻ ՀԻՎ ԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՄԱԼԳԱՔ
2. ԱՐԴԻՈՒՄ
3. ԲՆԱՌԱՋ ԱՆՑՐԱՋՆԱՀ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԳՈՒՆԱԿԱՆԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1930

Nº 7 (98)

Վ 7 (98) ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՍԹԵԼԻ

N° 7 (98)

~~Bx. № 64.~~ ԳՐԱԴԱՐԱՆ

N° 2092

634.8 ИИБ.КН.

Գ-91 ԱՐ
Գ. ԳՐՁԵԼՅԱՆ

ՎԱԶԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՄԻԼԴԻՈՒ
 2. ՈՒԴԻՈՒՄ
 3. ԲՆԱՎՈՐ ԱՆՏՐԱԳՆԱԶ

1969



450

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1930

7.03.2013

20.085



ԱՌԱՋԱԲԱՆ

Վերջին տարիներս շատ են խոսում ընդհանրապես բույսերի և մասնավորապես այգիների հիվանդությունների և դրանց դեմ կռվելու կամ այգիներին ու բույսերը բժշկելու մասին։ Շատերի համար անհասկանալի յէ, թէ ի՞նչպես եր, վոր մեր պապերն ու հայրերը իրենց այգիներից կամ ցանքերից լավ բերք եյին ստանում։ թէ և յերբեք նրանք իրենց այգիները և ցանքերը չեյին բժշկում։ Արդյոք, իսկապես, նրաց ժամանակ այգիներն ու ցանքերը չեյի՞ն հիվանդանում, թէ այգեգործներն ու յերկրագործներն այնքան տգետ եյին, վոր հիվանդությունները տեսնում եյին, բայց չեյին նաևաչում կամ դրա մասին գաղափար չեյին կարողանում կազմել։

Յենթադրել, վոր մեր պապերն ու հայրերն այն ասուին տգետ եյին, վոր տեսնելով, թէ ինչպես «սև» կոչված հիվանդությունից (ոհդիամից) խաղողը նաևն են և, չորանում և բերքը պակասում ե, իսկ «չոռից» (միլդյույից) ամբողջ վազը սերկաթափ է լինում և միևնույն ժամանակ վորեւ ուշադրություն չեյին դարձնում այդ յերկույթի վրա-դա անկարելի յէ։ Յերեւ ուշադրություն չեն դարձրել, ուրեմն, իսկապես, հիվանդություններ չեն յեղել, կամ յեղել են այնպիսի հիվանդություններ, վորոնի մեծ վնասներ չեն պատճառել կո'չ այգետերերին և վո'չ ել հողագործներին։

Իսկ յերեւ հիվանդություններ իսկապես չեն յեղել, ապա վորտեղի՞ց Յեկ ԻնջՊԵ՞Ս ԵՆ ՅԵՐԵՎԱՆԵԼ ԱՅԺՄ ՄԵԶԱՆԱՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՅԵԿ ՄԵԾ ՎԱՆԱՆԵՐ ՊԱՏՃԱՌՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

ՀԱՅՊՈԼԻԿՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 3651
ԳՐԱԼԵՊԳԼԽՎԱՐ 5418 (Բ)
ՏԻՐԱԺ 2000



Քանի վոր աշխարհի զանազան մասերում ապրող մարդիկ իրենց բնակության վայրերից չեյին դուրս գալիս և հեռու ճանապարհորդություններ չեյին կատարում, ամեն մի յերկրի հիվանդություն ել մնում եր միենաւյն վայրում։ Բայց յերք ստեղծվեցին հաղորդակցության ու ճանապարհորդության համար հեշտ ու արագ միջոցներ, յերք յերկարութիւնները զանազան բազաֆներ ու գյուղեր իրար հետ միացրին և ծովագնացությունն ել հեշտացավ ու զարգացավ, այն ժամանակ բույսերի, ինչպես և կենդանիների ու մարդկանց զանազան հիվանդություններն ել սկսեցին մի տեղից մյուս տեղ անցնել ու տարածվել։ Զարմանալի չե, վոր բանի դեռ մեր յերկիրը յերկարութու ցանցով կապված չեր Ռուսաստանի, հետևապես նաև ամբողջ աշխարհի հետ, այստեղ չկային խաղողի վազի վո՞չ միլդյու և վո՞չ ոփիում, կամ ինչպես ասում են՝ «չոռ» և «սև»։

Հետևապես, բնավ զարմանալի ել չի լինի, յերև վազը կամ մյուս որք Հայաստանում և մասնավորապես Արարատյան դաշտում յերկան նաև ուրիշ հիվանդություններ, ինչպես բլեկրոտը կամ Փիլլոբսերան, մանավանդ վերջինս, վոր արդեն Վրաստանից մուտք է գործել մեր սահմանները (Ալլահվերդու, Բարանայի, Շամշադինի, Իջևանի շրջանները)։

Խաղողի միլդիուն, ոփիումը, բլեկրոտը, Փիլլոբսերան անցյալներում Հայաստանում լինել չեյին կարող, վորովիետ այդ հիվանդությունները չկային վոչ միայն մեր հարկան Վրաստանում կամ Աղքարեցանում, այլև ամբողջ հին կոչված աշխարհամասերում-Յեվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում։

Այդ հիվանդությունները տարածված եյին միայն Ամերիկայում, և բանի դեռ Ամերիկան գտնված չեր, այդ հիվանդություններն ել չեյին կարող այդտեղից դուրս գալ ու տարածվել հին աշխարհամասերում։

Միայն 19-րդ դարում, մոտավորապես 80 տարի առաջ, այդ հիվանդություններից նախ ոփիումը և ապա մյուսներն սկսեցին յերկալ Յեվրոպայում, սկզբում գլխավորապես Ֆրանսիայում, ապա մյուս յերկրներում, վորտեղից ել մեզ մոտ են յեկել առայժմ յերկուսր-միլդիուն և ոփիումը ու

տարածվել ամենուրեք, իսկ Փիլլոբսերա կա Վրաստանի սահմանամերձ մեր շրջաններում։

Ի՞՞նչ Միջնօդներն են ՏԱՐԱԾՎՈՒՄ ՀԻՎԱՆԴԻՆ-ԹՅՈՒՆՆԵՐԸ. -Մեր այգեգործական գլխավոր կենտրոններից ե Յերկանը։ Յերկանի առանձին այգետներն իրենց այգիներում ունեն այնպիսի ծառապտուղներ, վորոնի առաջներում Հայաստանում չկային ու չեյին մշակվում։ Կան Ռուսաստանից բերված կեռասի, տանձի, դամբուլի, սալորի ծառեր, Գորուց, Ակրայից բերած դեղձանիներ և այլ պտղատու ծառեր։ Շատ այգետների պարծանեն են կազմում այդ ծառերը և նրանց պտուղները։

Յենքադրենիք, վոր այդ ծառերն իրենց հայրենիքում վարակված են յեղել վորկե հիվանդությամբ. բնական ե, վոր նրանից իրենց հետ այստեղ պիտի բերելին այդ հիվանդությունները և վարակելին նաև մեր հին ծառերը։

Շատ ունենք այգետներեր, յերկրագործներ, գիտնականներ զանազան յերկրներ նաև ապահովարհորդելիս հավանած բույսները բերելով իրենց հայրենիքը, նրանց հետ անգիտակացքար բերել են նաև հիվանդությունները։

Սյո ձևով ել Ամերիկայից Յեվրոպա յեն յեկել վազի վերը հիշած հիվանդությունները-միլդիուն, ոփիումը, բլեկրոտը և Փիլլոբսերան։

Յեվ յերք վորկե հիվանդություն յերկացել է մի այգում, այդտեղից ել նա շատ հեշտությամբ զանազան միջոցներով, բեկուզ բամու միջոցով, տարածվել է հարկան այգիները կամ դաշտերը։

Յերեւ մի արտ ցել անենք և տապա ամեն մի բուսած խոտ անմիջապես վոչնչացնենք, ու այդ հորի մեջ չը-ռողնենք վոչ մի հատիկ վորկե խոտի սնրմ, հորը միշտ շատ մաքուր և ցել պահենք, բայց մի վորոշ ժամանակ այդ հորը հանգիստ թռղնենք, կտսնենք, վոր նա այնուամենայնիվ, կծածկվի զանազան բույսերով։

Հողի մեջ սերմեր չկային, իսկ վո՞րտեղից տապա յեկան այդ բույսերը։

Քամին ե, վոր հարկան դաշտերում անած բույսերի բերեկ սերմերը բերում, ցանում ե այդտեղ։

Այսպես ել, յերք մի հիվանդություն ե յերկում վորկե տեղում, այդտեղից ել բամին այդ հիվանդության շատ մանր

ու քերեկ սպամերը տանում-տարածում է հարևան այգիներում և դաշտերում:

Հիվանդության սպամերը կարող էն տարածել նաև կենդանիները, քոչունեները, միջատները և այլն:

Բայց ամենից հաճախ հիվանդությունները տարածվում են հիվանդ կամ վարակված բույսերի տեղափոխությամբ: Յերե կախեթից կամ Խմերեթիայից ընտիր փոփոխակի վագեր տեղափոխնենք Ղամարու կամ Վաղարշապատ, դրանց հետ տեղափոխած կլինինենք նաև ֆիլոքսերան, գուցե և բլեկրոտը, վորոնի առայժմս մեր այդ շրջաններում չկան: Հետևապես, յերե մի վորևե տեղից նոր բույս ենի բերում կամ ստանում, նրանց վերաբերմամբ պիտի շատ զգույշ լինել: Առանց մտածելու, առանց լավ ուսումնասիրելու բոլոր հանգամանքները, մենի չպիտի վորոշենք վորևե տեղից, վորևե կենդանի բույս կամ նրա մի մասնիկը բերել կամ ապսարել, հակառակ դեպքում՝ մենի կարող ենի «հոնիք շինելու տեղ» աչքն ել հանել»:

Հիվանդության ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. - Խսղողի վազը, ինչպես և ամեն մի բույս կարող է հիվանդանալ զանազան պատճառների ազդեցությամբ: Որինակ՝ բույսերը կարող են հիվանդանալ պարագիտների ազդեցությամբ*):

Պարագիտ ե՝ «սոլիտեր» կոչված վորդը, վոր մարդու աղիքների մեջ և լինում: Այդ վորդն ապրում է մարդու հաշվին: Պարագիտ ե մեր բոլոր այգեզօրծներին լավ հայտնի խնձորենու բրբուռը, վոր ապրում է նրա տերևների հաշվին, նաև դադա, ժիշկ կամ գելուկ կոչված բույսը, վոր ապրում է խաղողի վազի հաշվին:

Պարագիտները կարող են լինել բույսեր կամ կենդանիներ: Յերբ մի հիվանդություն առաջ է գալիս սունկ կոչված բույսից, այն ժամանակ այդ հիվանդությունը կոչվում է ԱՆԿՍՅԻՆ: Հիվանդությունը կոչվում է ՄԻՋԱՍՅԱՅԻՆ, յերե նա առաջ է գալիս միջատի ազդեցությամբ: Միլդյուն, ոի-

դիումը սնկային հիվանդություններ են: Ֆիլոքսերան միջատ է և նրանից առաջ յեկած հիվանդությունը՝ ՄԻՋԱՍՅԱՅԻՆ:

Խաղողի վազը կարող է հիվանդանալ նաև ուրիշ պատճառներից: Որինակ՝ անբարեհաջող կլիմայից, կամ հողի վատ կամ անբավարար կազմության ենտևանիքով:

Այս գրքույկում խոսելու յենի միայն վազի այն սնկային հիվանդությունների մասին, վորոնի տնտեսական նշանակություն ունեն Հայաստանում, այսինքն՝ միլդիույի, ոիդիումի և անտրաֆնոզի մասին:



Վ: Հ 202.

*) Պարագիտ են կոչվում այն բույսերն ու կենդանիները, վորոնի ապրում են ուրիշ բույսերի կամ կենդանիների հաշվին:

ՄԻԼԴԻՌԻ

Միլդու բառն անգլերեն է և նշանակում է բորբոս։ Այդպես են անվանում նրա համար, վորովհետեւ միլդիուով հիվանդացած վազի անընդունակությունը ծածկված է լինում բորբոսով։

Այս հիվանդությունն առաջներում գոյություն ուներ միայն Ամերիկայում։ Այստեղից նա Յեվրոպա անցավ միայն 1878 թվին։ Յեվրոպայից այս հիվանդությունը շատ արագ կերպով տարածվեց ամեն տեղ՝ ու կովկաս ել հասավ 1886 թվին։

Թե այդ հիվանդությունը յե՛րք և մուտք գործել Հայաստան, դժվար է ասել, բայց մի բան հաստատ ե, վոր նա համենայն դեպս 1910 թ. առաջ ե յեկել։

Միլդիույի նշանները։—Միլդիուն լինում է միայն վազի աճող և կանաչ մասերի վրա, այսինքն, տերեների, աճող շեփի, թելիկների, ծաղիկների, պտղակոթի և պտուղների վրա։

Հիվանդությունն արտահայտվում է տերեների վրա հետեւյալ ձևով։ տերենի միապաղաղ կանաչ գույնը տեղ-տեղ գունատում է, գեղնում, ապա դորչ գույն ստանում։ Այսպիսով, տերենի վրա առաջ են գալիս բծեր (խալեր), վորոնց մեծությունն սկզբում փոքր ե լինում, հետո հետզհետեւ ավելանալով՝ հասնում է մինչև 4 սանտիմետրի։ Այդ բծերը տերեների տակի կողմից ծածկվում են սպիտակ փոշով։ Այդ փոշին մատով կարելի յե մաքրել։

Յեթե հիվանդությունը գարնանն է յերեսում, ապա այդ բծերից հիվանդ տերենի վրա կարող են լինել 1, 2, 3 հատ, բայց ամեն մի բիծը բավական մեծ է լինում։

Յեթե հիվանդությունն ամառն է առաջ գալիս, այն ժամանակ ամեն մի հիվանդ տերենի վրա կարող է նույնիսկ 15-20 բիծ լինել, բայց այդ դեպքում բծերը փոքր են լինում։



№ 1. Միլդիուն տերենի վրա ամրան սկզբին.

Սակայն, յեթե հիվանդությունն աշնանն է տարածվում, ապա յուրաքանչյուր հիվանդ տերենի վրա կարող են լինել չափազանց մեծ քանակությամբ, բայց շատ մանր բծեր։ Բացի դրանից, դարնանը և ամառը յերեւան յեկող միլդիույի բծերը լինում են կլոր շրջագծով, իսկ աշնանը յերեկացողները՝ անկյունավոր (տես նկ. 1 և 2)։

Միւնույն հիվանդ տերեւի վրա յեղած բոլոր բժերը միաժամանակ չեն առաջ գալիս . մի քանիսը շուտ են յերեան գալիս, մյուսները շատ ուշ, այնպես վոր աշնանը վարակված տերեւի վրա իրար կողքի կարող են լինել և միանգամայն գորշ գույն ունեցող բժեր և միանգամայն կանաչ գույն ունեցող բժեր և դեղին և կանաչա-դեղնավուն և այլն և այլն, այնպես վոր աշնան հիվանդ տերեւն իրանից ներկայացնելով այդ զանազան գույնի և անկյունավոր բժերի դեղեցիկ հյուսվածք՝ կարծես գույնզգույն սաղափով նախած լինի: Այդպատճառով աշնան միլդիույյի այդ ձեր կոչվում և միլդիույյի մոզայիկ ձև:



№ 1. Աշնանը տերեւի վրա յերեացած միլդիուն.

Պատահում է, վոր բժերի հետեւ սպիտակ փոշի չի յերեւմ: Ի՞նչական վորոշել, թե տերեւը միլդիույյով ե վարակված, թե մի այլ բանով՝ քանի վոր միլդիույյի հատկանիշը նրա սպիտակ փոշին ե, վոր գտնվում ե բժի վրա, տերեւի տակի կողմեց: Այս դեպքում պիտի վերցնել այդ տերեւը զնել խոռնավ ու տաք տեղում. որինակ՝ կարելի յե տերեւը զնել թաց բամբակի կամ թաց ծծան թղթի մեջ և պահել տաք տեղում: Յեթե բիծը միլդույյի բիծ ե՝ 24-26 ժամից հետո տերեւը տա-

կի կողմից կծածկվի միլդիույյի հատկանիշ սպիտակ փոշով, հակառակ դեպքում, սպիտակ փոշի չի յերեւ:



№ 3. Միլդիույյի ազդեցությունից շիվը ստանում ե հայերեն զլխատան «Տ» տառի ձև.

Միլդիույյի ազդեցությունից, լինի դա գարնանը, ամրանը, թե աշնանը, հիվանդ տերեւներն աստիճանաբար չորանում ե թափվում են:

Մերկիուն յերեում և միայն շվի վրա և յերբեք չի լինում մայտացած (միամյա կամ ավելի հին) **մատի վրա:**

Սկզբում շվի հանդույցի վրա հիվանդությունը նշմարվում է նրանով, վոր այդ հանդույցի վրա առաջ է գալիս գորչ կապտավուն գույնի բիծ, հետո այդ բիծը ձաքճքվում է և խոնավ յեղանակներին ճաքած տեղում առաջ է գալիս նույնալիսի սպիտակ փոշի, մորպիսի սպիտակ փոշին կազմում է հիվանդ տերեւի հատկանիշը:

Ընդհանրապես միլդիուն շվի վրա վնաս չի տալիս, ծայրահեղ դեպքում է միայն, յերբ միլդիույի զարգացման համար միանդամայն նպաստավոր պայմաններ են լինում, վոր շիմն իր ուղղությունը յերկու անդամ փոխելով ստանում է հայերեն գլխատառ Տ-ի ձև (Տե՛ս նկ. № 3):



№ 4. Միլդիուն վողկույզի վրա.

արտահայտվում է հենց այն ձևով, ինչ ձևով լինում է շվի վրա՝ գորչ կապտավուն գույնի բծով:

Յեթե բիծն առաջ է դալիս վողկույզի կոթի հենց սկըզբում, ամբողջ վողկույզը չորանում է: **Յեթե բիծն առաջ է գալիս վողկույզի առանձին վողկուզիկի վրա,** այն ժամանակ միայն համապատասխան հատիկներն են չորանում:

Ծաղիկները նույնպես կարող են հիվանդանալ միլիույով— դրանց վրա նույն նշաններն են լինում, իչնպոք տերեւների վրա: Հիվանդ ծաղիկները չեն բեղմնավորվում և պառագ չեն տալիս:



№ 5. Միլդիույի ազդեցության տակ տերեւաբակ յեղած վագ.

Խաղողի հատիկի վրա միլդիուն կարող է յերկու կերպ արտահայտվել: Կամ հենց այնպես, ինչպես շվիրի վրա,

գորշ, կապտավուն գույնի բծերով, կամ հատիկները ծածկված են լինում միլդիուցին հատկանիշ սպիտակ փոշով։ Սկզբներում խաղողի հատիկների վրա յերեացող հիվանդություններն ել ընդունում ենին ինչպես զանազան հիվանդություններ։ (Տե՛ս նկ. №4)։ Բայց այնքան ել դժվար չե մի ձեւց մյուսն ձեւ ստանալիք և հավաստիանալ, վոր յերկուսն ել նույն հիվանդության զանազան ձևերն են։ Այսպես՝ բավական ե, յեթե գորշ-կապտավուն բիծ ունեցող խաղողը գնենք խոնավ և տաք միջավայրի մեջ (ինչպես տերեւի մասին վերն ասացիք), վոր նա ծածկվի սպիտակ փոշիով, կամ բավական ե, յեթե սպիտակ փոշով ծածկված խաղողը մատով սրբենք, վոր ստանանք գորշ-կապտավուն գույն ունեցող հատիկ։

Միլդիույի պատճառած վնասները. — ինչպես վերն ասացինք, միլդիույի ազդեցության տակ խաղողի վազի տերեները չորանում են ու թափում։ Յերեմին պատահում ե, վոր մի այդու բոլոր վազերը կամ նույնիսկ ամբողջ այդեղործական շրջանների բոլոր այդինները միլդիույի ազդեցության տակ տերեւաթափ են լինում։ (Տե՛ս նկ. № 5)։

Վազի բոլոր տերեներն աշնան վերջում, բնականաբար, պիտի թափվեն։ Այս տերեւաթափի վազին վոչ մի մնաս չի տալիս. այդ ժամանակ վազը հասած և մատերը փայտացած են լինում և ձմեռն անցկացնելու համար անցած լինելով հանգիստ կյանքի՝ տերեների կարիք չի զգում։

Ուրիշ բան ե, յեր վազն իր տերեներից զրկվում և գարնանը, ամառվա ընթացքում կամ աշնանը՝ նախքան մատերի հասունանալը։ Այդ ժամանակ տերեները հանդիսանում են վազի թե՛ բերանը և թե թոքերն ու ստամոքսը։ Տերեների միջոցով վազն ողից ածխածին և ստանում (ուտում ե), տերեների միջոցով նա արտաշնչում է, այսպես կոչված, ածխաթթու գազը (շնչում ե), տերեների միջոցով նա ժարսում է ողից վերցրած ածխածինը և արմատների միջոցով հողից վերցրած այլ սննդաբար նյութերն, այսինքն՝ տերեների մեջ են պատրաստվում այն բոլոր նյութերը (սոլս, շաքար և այլն և այլն), վորոնք հարկավոր են վազի

աճեցողության, մատիկ փայտանալու և խոզողի հասունացում համար։

Վազը միլդիուփ հետևանքով զրկվելով տերեներից՝ զրկվում ե իր բերնից, թոքերից և ստամոքսից։ Յեվ իսկապես, այդպիսի վազը վոչ կարողանում է խաղող հացանել և վոչ ել մատերը փայտացնել, հետևապես մատերը մնում են նվազ, կանաչ և ձմեռը հեշտությամբ ցրտահարվում։ Այդպիսի նվազ մատերը հետևյալ տարին-յեթե ձմեռը չեն ցրտահարվել-կամ ամենին բերք չեն տալիս, կամ շատ քիչ քանակությամբ շաքար և մեծ քանակությամբ թթվուտ ե ունենում. սկ խաղողը մնում է կարմիր կամ կարմրավուն, չի սևանում, գինին լինում է թույլ, թթու, դժգույն և հիվանդությունների յենթակա. այդպիսի գինին լավ չի դիմանում, հեշտությամբ հիվանդանում է (շուր և գալիս, սևանում ե և այլն)։

Յերբ միլդիուն լինում և ծաղկեների կամ վողկույզի վրա, այդ գեպքում պատահում ե, վոր բոլորովին բերք չի համարվում, կամ ծաղկեներն ամբողջովին չորանում-վոչնանում են, և կամ վողկույզներն են մասամբ կամ ամբողջովին վոչնչանում։

Յերբեմն ել պատահում ե, վոր միլդյուն վոչ միայն չի փչացնում գինու վորակը, այլ ընդհակառակը՝ լավացնում է։ Այդ պատահում ե այն ժամանակ, յերբ միլդյուն տերեները չի փչացնում, բայց փչացնում-վոչնչացնում է բերքի մի մասը (ծաղկի կամ խաղող ժամանակ)։ Վազի վրա մնալով ավելի քիչ քանակությամբ խաղող՝ ամեն մի վողկույզն անհամեմատ ավելի լավ և սնվում, ավելի մեծ քանակությամբ շաքար և այլ նյութեր և հավաքում իր մեջ, ուստի և, անհամեմատ, ավելի լավ գինի յե տալիս։

Ի՞նչից ե առաջ գալիս միլդիուն. — Հիվանդությունների պատճառի մասին խոսելիս ասացինք, վոր բույսերը կարող են հիվանդանալ պարագիտներից և վոր այդ պարաղիտները կարող են լինել բույսեր կամ կենդանիներ։

Միլլյուն նույնպես պարագիտային հիվանդություն եւ այսինքն՝ պարագիտն եւ առաջ բերում միլլյու հիվանդությունը:

Այդ պարագիտը բույս է և պատկանում է սնկերի դասին։ Ասել ե թե՝ միլլիոն սնկային հիվանդություն է։


Միլդյուն առաջ բերող սունկը սնվելու համար մտնում է վազի տերենների, չվերի, թելիկների, խաղողի հատիկների և այլ մասերի մեջ և սկսում է ծծել նրանից հյութը, ինչպես մի տղրուկ կպչում է մարդու մարմնին և նրանից արյուն ծծում։ Տղրուկի և վազի միլդյութի սնկի ծծելու յեղանակի մեջ միայն այն տարբերությունը կա, վոր տղրուկն իր բնանով և ծծում արյունը, իսկ միլդյուցի սունկն իր ամբողջ մարմնով և ծծում վազի հյութը, այնպես, ինչպես մարդու աղիքների մեջ գանձած սովորեր վորդը թացի դրանից, տղրուկը կպչում է մարդու մարմնի արտաքինին, իսկ միլդյուցի սունկը մտնում է վազի գանազան մասերի մեջ և այդուեղ ել տարածվում այնպես, ինչպես բորբոսնած հացի մեջ բորբոքը մրտնում և ամբողջ հացի մեջ և վոչ թե տարածվում միայն նրա մակերեսութիւնը։

Արբնակ՝ միլդյույի սունկը մտնելով վազի տերեւի մեջ սկսում են բահանութիւն ծծել, վորի ապդեցության տակ տերեւի արդ մասն սկզբում դեղնում են, հետո չդիմանալով սնկի հարձակումներին՝ չորանում են: Ահա՛, այդ ձեռվ ել առաջ են դաշիս տերեւի վրայի բծերը:

Ասացինք, վոր միլդյուն սունկ է, բույս և Բայց զիտենք,
վոր այդ բույսերն առաջ են գալիս սերմից: Որինակ՝ ցորենն
առաջ ե գալիս ցորենի հատիկից՝ սերմից, վոր ցանում ենք:
Նա ծլում է, մեծանում, ցողուն և տերեներ ե տալիս, վերջը՝
հոսկ, իսկ հետո նորից հատիկ արտադրում: Միլդյույի
սունկն ել ունի այդ սերմը, վոր սպոր ե կոչվում, ունի իր ցո-
ղունը, վոր կազմված ե թելերից և այդ թելերն են, վոր տա-
րածվում են վազի տերեների և այլ մասերի մեջ: Ինչպես վոր
ցորենը վորոշ ժամանակ աճելուց հետո յև հասկ տալիս և
ապա ցորեն, այնպես ել միլդյույի սպորից դուրս յեկած թե-
լերը մի վորոշ ժամանակ աճելով և մնվելով տերեւի ու վազի
այլ մասերի մեջ՝ առաջ են բերում իրենց հասկերն ու սեր-
մերը: Յեկ իսկապես, տերեւի բծի վրա տակի կողմից առաջ

Ե գալիս փոշի: Այդ փոշին վոչ այլ ինչ ե, քան յեթե սնկի
սպորները և սպորակիր թելեր, վորոնցից— սպորները համա-
պատասխանում են ցորենի հատիկներին, իսկ սպորակիր թե-
լեր՝ ցորենի հասկին:

Նկար № 6-ը ցույց է տալիս, թե ի՞նչպես սնկի թելերը տարածվել են տերևի հաստության մեջ, իսկ տերևերի տակի կողմից դուրս են յեկել սպորակիր թելեր, վորոնց վրա կպած են սպորները։ Իսկ № 7 նկարը ցույց է տալիս, թե ինչպես նույն սպորներն ու սպորակիր թելերները դուրս են յեկել խաղողի հատիկներից։



№ 6. Միլդիուն տերի մեջ, զորի տակից
ոռուս են յեկել սպորտակիր քելեր՝ ողբաներով

Այդ սպառնելը քամիների միջոցով ընկնելով նոր տերեւների կամ վաղի այլ մասերի վրա, որինակ՝ շվի կամ խաղողի վրա՝ առաջ են բերում նոր վարակումներ, նոր բծեր։ Ահա այդ ձևով և, վոր միլդյուն արագորեն տարածվում է այդիներում։

Միլդյանի զարգացմանը նպաստող պայմանները.—
Յեթև լորու հատիկը դժեք չոր հոգի մեջ, նա այնտեղ
յերեք չի ծիծ և ամի՞։ Վորաբերդի Պահական Արքական Տիկին, անհրա-

ժեշտ ե, վոր հողի մեջ վորոշ քանակությամբ խոնավություն մինի:

Այդպես ել, յեթե միլդյույի սպորն ընկնի վազի տերևի վրա, չի ծի և չի վարակի տերևը, տուանց ջրի կչորանա այդ տերևի վրա և կվոչնչանա, բայց յեթե տերևի վրա լինի մի կաթիլ ջուր, ապա այդ ջրի կաթիլների մեջ միլդյույի սպորը կծի և կվարակի տերևը:



№ 7. Միլդյույի վարակված խաղողի հատիկները (գիլաները).

Տերևի վրա ջրի կաթիլ կարող ե տուած գալ ցողի կամ անձրևի հետևանքով: Ահա՛ թե ինչու միլդյուն ուժեղ կերպով զարգանում ե այնտեղ, վորտեղ ամտուվա ընթացքում գիշերները բույսերի վրա ցող ե նստում: Նույն այդ պատճառով ել միլդյուն ուժեղ կերպով զարգանում ե և՝ անձրևներից հետո: Յեթե անձրևն անդամ նպաստում ե միլդյույի զարգացմանը:

Հուլիսի սկզբներում Արարատյան դաշտում համարյա թիշտ այնպիսի անձրևներ են լինում, վոր ողել հութաբանա-

կան կայանների անձրևաչափերն անդամ չեն կարողանում արձանագրել: Ծատ անդամ պատահում ե, վոր պայծառ, արեստ որերին հաճախ մարդ սենյակ է մտնում և, ասենք, յերկու բույեցից հետո դուրս գալիս և չի նկատում, վոր այդ կարծ ժամանակվա ընթացքում անձրև է յեկել և վերջացել: Նման անձրևներն, իհարկե, չեն կարող արձանագրվել ողերին թաբանական կայաններում, բայց նրանք բավական են միլդյույի ուժեղ արտահայտվելու համար:

Յել իսկապես, մեր Արարատյան դաշտի պայմաններում հուլիսի սկզբին ե, վոր ամենից շատ ե զարգանում միլդյուն:

Այդ ժամանակամիջոցում, յերբեմն յերկու-յերեք որվա ընթացքում, վոչնչանում ե բերքի կեսը և նույնիսկ յերեք քառորդը:

Վերն ասացինք, վոր լորու ծլելու և աճելու համար հարկարավոր ե վորոշ խոնավություն: Յեթե լորու ծլելուց և մի քիչ բարձնալուց հետո հողը չորանա, այն ժամանակ լորին նույնպես կդադարի աճել, նա այլևս չի զարդանա, բայց յեթե հողը նորից ջրենք՝ լորին կշարունակի աճել:

Նույն ե և միլդյույի սունկը: Խաղողի վազը վարակելուց հետո, յեթե այդ վազի մեջ խոնավություն չկա, այլևս չի զարգանա և նոր սպորներ (սպիտակ փոշի) չի տա: Այդ պատճառով ել վորչափ վազը խոնավ լինի, այնքան ել սունկն այդ վազի մեջ ավելի լավ կզարդանա և կաճի: Խոկ վազը խոնավ կլինի, յեթե նա դտնվում ե խոնավ կամ շատ ջրած հողում: Այդ ե պատճառը, վոր խոնավ և շատ ջրած տեղերում միլդյուն ավելի շատ ե զարգանում, քան չոր տեղերում: Առհասարակ հողը գարնանն ավելի խոնավ ե լինում, քան ամառը, զրա հետևանքով վազը զարնանն ավելի յե խոնավ լինում քան ամառը, նրա տերեները զարնանն ավելի շատ ջուր են պարունակում, քան ամառը: Այդ պատճառով ել զարնանը տերեների վրա առաջ յեկած միլդյույի բծերն ավելի մեծ-մեծ են լինում, քան ամառվա ընթացքում առաջ յեկածները:

Հենց նույն պատճառով ել աշնանը տերեներն ավելի չոր են լինում և նրանց վրա առաջ յեկած միլդյունի բծերն անհամեմատ ավելի փոքր են լինում:

Բայց աշնանը զարգացած միլդյույի բժերն ավելի շատ են լինում տերևների վրա, իսկ ամառն ել անհամեմատ ավելի շատ բժեր են լինում, քան գարնանը:

Ինչո՞ւ:

Գարնանը, ճիշտ ե, անհամեմատ ավելի շատ խոնավություն ե լինում ինչպես ողի, նույնպես և վազի մեջ, ուրեմն՝ միլդյույի զարգացման համար ավելի նպաստավոր պայմաններ են լինում, քան ամառը և աշունը, բայց գարնանը բնության մեջ անհամեմատ ավելի քիչ քանակությամբ սպորներ են լինում, քան ամրանը և աշնանը:

Յեթե գարնանը վարակվող տերևնի վրա կարող ե ընկնել 1, 2 կամ 3 սպոր և առաջ բերել 1, 2 կամ 3 բիծ, ամառը յուրաքանչյուր տերևին ընկնում ե 15–20 սպոր, իսկ աշնանը 50–60, և այդպիսով ել առաջ են գալիս համապատասխան թվով բժեր՝ 15–20, կամ 50–60:

Վորեւ բույսի սերմի ծլելու և աճելու համար միայն խոնավությունը բավական չեն: Յեթե լրբու ծլելու համար միանգամայն նպաստավոր խոնավություն ստեղծենք հողի մեջ, նա չի ծլի, յեթե խոնավության հետ չկա նաև վորոշ քանակությամբ տաքություն և ջերմություն:

Այսպես ե և միլդյույի սունկը. յեթե խոնավություն կա, բայց ջերմությունը շատ ցածր ե՝ միլդյույի սպորը չի ծլի: Ամենապակասը՝ ջերմությունը պիտի 12 աստիճան լինի, վորպեսզի սպորը ծլի և սունկն աճի: Միլդյույի սպորը ամենից լավ ծլում ե և սունկն ել աճում է, յերբ ողի մեջ ջերմությունը 25–30° ե լինում:

Ահա այդ ե պատճառը, վոր մեզ մոտ միլդյուն ամենից շատ զարգանում և տարածվում է հուլիսի սկզբներին, վորովհետև այդ ժամանակի, բացի վերին հիմքած անձրևներից, ողի ջերմությունն ել լինում ե 25–30°:

Միլդյույի զարդացմանը շատ նպաստում ե մառախուղը: Վորքան խիտ լինի մառախուղը, այսինքն վորքան այնպիսի մառախուղ լինի վոր ամեն բան թրջի, տերեների, չվերի և խաղողի վրա ըրի կաթիլներ թողնի, այնքան միլդյուն ավելի ուժեղ կզարդանա:

Ամառվա ընթացքում, մառախուղի ժամանակ, թեև արեի ճառագայթներն անմիջապես չեն ընկնում բույսերի

վրա, բայց շատ տոթե ե լինում և այդ տոթի ժամանակ ե, վոր միլդյուն ուժեղ զարդանում ե: Ահա այդ պատճառով ե, վոր մեր ժողովուրդը միլդյուն վերագրում է տոթին, ասելով՝ «չոռը տոթիցն և առաջ գալիս»:

Յեթե համեմատելու լինենք իրար կողքի դժնվող յերկու այդի, միատեսակ վազերով և նույն պայմաններում տնկված, վորոնցից մեկը սակայն լինի շատ լավ մշակված, փորված, խոտը քաղած, սուդը տված, իսկ մյուսը վասմշակված, խոտով ծածկված, կտեսնենք, վոր առաջին այդին, այսինքն լավ մշակվածը, անհամեմատ ավելի շատ միլդյուն կոնենա, քան վատ մշակվածը, խոտով ծածկվածը: Վորքան խոտն ավելի շատ լինի, ավելի մեծ լինի և ամբողջ վազը ծածկած, այնքան ել ավելի քիչ միլդյուն կլինի:

Ի՞նչով ե բացատրվում այս յերեսույթը:

Լավ մշակված այդու հողն իր մեջ անհամեմատ ավելի շատ խոնավություն ե պարունակում, քան վատ մշակվածը: Խոտն իր աճեցողության համար պահանջում է մեծ քանակությամբ ջուր և այդ ջուրը նա վերցնում է այդու հողից, չորացնելով նրան: Ուստի լավ մշակված այդում, վազն աճերով ավելի խոնավ հողերում՝ ավելի խոնավ ե լինում, հետեւապես և նպաստում է միլդյույի զարգացմանը:

Խոտակալած այդու հողն ավելի չոր լինելով, նրա մեջ աճած վազ ևս չոր ե լինում, ուստի և չի նպաստում միլդյույի զարգացմանը:

Բացի գրանից, միլդյույի տարածման համար անհրաժեշտ են սպորներ: Խոտով ծածկված այդում սպորների տարածմանը շատ ե արգելում խոտը, վորի վրա նստելով սպորները չեն ծլում, չորանում են: Ընդհակառակը, խոտից ազատ, սուդը տված այդիներում միլդյույի սպորները քամու միջոցով ազատ կերպով տարածվում են և հեշտությամբ վարակում առաջ բերում:

Այս հանգամանքը մի լավ միջոց ե ծույլ և վատ տնտեսայգեղործի համար՝ միլդյույի գեմ կռվելու: Բայց աշխատասեր, ընդունակ և խելացի այգետերը յերեք իր այդին միլդյույից ազատելու համար վատ չի մշակի և խոտով չի ծածկի: Նա իր այգին թե՛ լավ կմշակի և թե՛ հիվանդու-

թյան դեմ կկովի այն միջոցներով, վոր գիտությունն ու փորձը ցույց են տալիս:

Այն հանգամանքը, վոր մշակած այգիններն ավելի յեն յենթակա հիվանդության, կարող ե շատերին թյուրիմացության մեջ զցել, վորոնք տեսել են, թե ինչպես լավ մշակած այգինները ազատ են յեղել հիվանդությունից, իսկ վատ մշակածները՝ հիվանդացած:

Զարմանալի վոչինչ չկա, յերբ լավ մշակված այգինները հիվանդությունից ազատ են լինում: Այն այգեգործը, վոր իր այգին լավ ե մշակում, ժամանակին ել բժշկում ե, բնական ե, վոր այդ այգին հիվանդություններից ազատ կլինի, քան վատ մշակված և չբժշկված այգին:

Սակայն, յեթե վերցնենք նույն պայմաններում յերկու այգի իրար կողքի, մեկը լավ մշակված, մյուսը՝ վատ, յերկուսն ել չարակած, այդ ժամանակ կտեսնենք, վոր առաջինն ավելի ե յենթակա միլդյուի, և նրա ուժեղ զարդացման գեպքում առաջինն ավելի ուժեղ կհիվագանա, քան յերկրորդը:

Սխալ գիտողությունների վրա յե հիմնված յեղել, վոր նույնիսկ շատ գրքերում գրել են թե՝ «յեթե ուզում ես այդիդ ազատել հիվանդությունից, լավ մշակիր, լավ քաղհանիր»: Առանց սրսկումների այս ձևով մշակած այգին, կրկնում ենք, ավելի կհիվանդանա:

Ի՞նչպես կույել միլդյույի դեմ.—Յեթե վորնե հողամասում չայիր կա, նրանից ազատվելու համար բավական չե միայն հողից դուրս յեկած չայիրը հնձել, վորովհետե ինչքան ել վոր չայիրը հնձես, դարձյալ նորը դուրս կգա: Չայիրը ազատվելու միակ միջոցը՝ հողը քանդելը և նրա մեջ գտնված չայիրի բոլոր արմատները հանել-վոչնչացնելն ե:

Այդպես ել, յեթե միլդյույի սունկը մտել ե տերենների մեջ, նրանից ազատվելու համար մենք չենք կարող կովել այն փոշու դեմ, վոր դուրս ե գալիս բծերի տակի կողմը, վորովհետե ինչքան այդ փոշին սրբելու լինենք, կամ վորեն դեղի միջոցով վոչնչացնենք, մինույն ե, այդ փոշին չայիրի պես նորից դուրս կգա, քանի վոր նրա իսկական մարմինը սունկում ե տերեկի մեջ:

Ուրեմն, յեթե ուզում ենք միլդյույից ազատվել, նրա սունկը պիտի վոչնչացնենք հենց տերեկի մեջ:

Դժբախտաբար մենք չենք կարող վոչնչացնել միլդյուի սունկը տերեկի մեջ, առանց վոչնչացնելու այդ տերենները: Հետեւապես, յեթե միլդյուն արգեն մտել ե վաղի մեջ, մենք այլևս նրան դեմ վոչինչ անել չենք կարող. մենք չենք կարող բժշկել վազը միլդյու հիվանդությունից:

Ուրեմն՝ ի՞նչ պիտի անել: Պիտի աշխատել, վոր վազը չհիվանդանա միլդյույով: պիտի միլդյույի առաջն առնել: Բայց ի՞նչպես:

Յեթե նավթու հողում կամ այնպիսի հողամասում, վորտեղ վորոշ թույներ են ածվել լորի ցանենք, չի ծլի: Լորին թունավորվում ե նավթի կամ թույների աղղեցություններից և չի ծլում:

Հենց այդ ձևով ել պիտի թունավորել նաև այն միջավայրը, վորտեղ պիտի ծլի միլդյուի սպորը: Հայտնի յե՛ վոր միլդյուի սպորը ծլում ե ջրի կաթիլների մեջ. թունավորելով այդ ջրի կաթիլը, նրա մեջ այլևս միլդյուի սպոր չի ծլի և չի վարակի վաղը:

Ի՞նչպես պիտի թունավորել այն ջրի կաթիլը, վորտեղ միլդյուի սպորն ե ծլում:

Դրա համար վազը (նրա տերենները կամ այլ վարակվող մասերը) նախորոք պիտի ծածկել վորոշ թույնով, վորն ամուր կպչի վազին և հետադայում՝ անձրեկի կամ ցողի այն կաթիլների մեջ, վորոնք նստում են վաղի վրա, քիչ-քիչ հալվելով՝ կարգելի միլդյուի սպորի ծլելը:

Այդ պատճառով ե, վոր այգինները սրսկում են բորդոյան հեղուկով, վորի մասը կաթիլները ծածկում են վաղի տերենները կամ խաղողը: Շուտով այդ կաթիլները չորանում են և վազին կպած ե մնում մի կապտավում նյութ, վոր անձրեկի կաթիլի կամ ցողի մեջ հեշտությամբ լուծվում ե: Պետք ե ասել, վոր այդ նյութը շատ քիչ ե լուծվում, բայց այդ քիչն ել միանդամայն բավարար ե թունավորելու ջրի կաթիլը և թույլ չոտար, վոր այնտեղ միլդյուի սպոր ծլի: Վորպեսզի կարելի լինի գաղափար կազմել, թե այդ նույթը ի՞նչքան քիչ ե լուծվում ջրի մեջ և միենույն ժամանակ վորքան ուժեղ թույն ե միլդյուի սպորների համար, բա-

վական ե ասել, վոր այդ նյութի մի մասը կարող ե լուծվել քառասուն հազար մաս ջրի մեջ (1:40,000), իսկ միլիոնին թունավորելու համար բավական ե, վոր այդ նյութի մեկ կամ մեկ և կես մասը լուծվի հինգ միլիոն մաս ջրի մեջ (1 կամ ½: 5,000,000): Ասել ե՝ յեթե տերեւը ծածկված ե այդ նյութով, այլիս չի կարող վարակվել միլիոնով, վորովհետեւ վոչ մի կաթիլ ջուր չի կարող կանգնել այդ տերեւի վրա, վորի մեջ չլուծվի այն քանակությամբ թույն, վոր միանդամայն սպանի այդ կաթիլ ջրի մեջ ընկած սպորը:

Ի՞նչպես պատրաստել բորդոյան հեղուկը՝ Բորդոյան հեղուկը պատրաստում են պղնձի արջասպից (վորին ժողովուրդը կապույտ քար կամ կապույտ շիր ե ասում), կրից և ջրից: Մեկ հեկտարիտը (100 լիտրը 8 դույլից մի քիչ ավելի յե) ջրին վերցնում են 1 ու կես կիլոգրամ (1 կիլոգր=1000 գրամի կամ մոտավորապես 2 ու կես դրվանքայի*): Պղնձի արջասպ և համապատասխան քանակությամբ կիր: Ասում ենք համապատասխան քանակությումբ, վորովհետեւ ճիշտ կշռը դժվար ե նախորդ ասել, նկատի ունենալով այն հանգամանքը, վոր այստեղ նշանակություն ունի կրի վորակը: Պետք ե գործածել չհազար կամ չմարած կիր: Բայց պատահում ե, վոր կիրը շատ լավ այրած ե լինում և իր մեջ չփառունակում վոչ մի կտոր հում կրաքար, այսինքն՝ չայրված քար, ինչպես և ամենեին չի պարունակում ավաղ: Լինում ե նաև կիր, վորի կեսը հում կրաքար ե կամ ավաղ: Իհարկե, վերջին տեսակի կրից յերկու անդամ ավելի պիտի վերցնել, քան առաջինից, վորովհետեւ բորդոյան հեղուկ պատրաստելու համար վոչ կրաքարն ե պետքական և վոչ ել ավաղը:

Մեկ հեկտարիտը բորդոյան հեղուկ պատրաստելու համար վերցնում են կես հեկտարիտը (50 լիտր կամ 4 դույլ) ջուր և ածում են մի կիսատակառի կամ մի այլ ամանի մեջ (բայց

*) Թեև մեզ մոտ արդեն պաշտոնապես ընդունված են չափերի մետրական սիստեմը, սակայն նկատի ունենալով, վոր մեր ժողովուրդը այդ չափերին տակավին լավ ծանոթ չե, ուստի մետրական չափերին գրագընթաց տալիս ենք նաև ոռոսական նախկին չափերը:

վոչ յերկաթե): Վերցնում են մեկ ու կես կիլոգրամ պղնձի արջասպ և ածում են մի փոքրիկ տոպլրակի մեջ կամ փաթաթում են վորեւ շորի կտորի մեջ և կախում կիսատակառը լցրած ջրի մեջ: Պղնձի արջասպը կամաց-կամաց սկսում ե լուծվել ջրի մեջ: Ապա մի այլ ամանի մեջ (վոր կարող ե լինել դույլ, կավե, փայտե կամ պղնձե աման) լցնում են մոտավորապես յերկու կիլոգրամ չհանգըրած (քար) կիր և շատ քիչ ջրով հանգցնում: Յերբ ամբողջ կիրը հանգչում-դառնում ե սպիտակ, մանր փոշի, ավելացնում են 10 կամ 20 լիտր ջուր և անդադար խառնում: Այսպիսով ստացվում ե այսպես կոչված՝ «կրակաթ»: Այդ կրակաթը ավագից կամ քարերից մաքրելու համար քամում են մաղով: Կրակաթը կամաց-կամաց լցնում են պղնձի արջասպի լուծույթի մեջ, իսկ վերջինս մի փայտե ծողով անդադար խառնում: Ամբողջ կրակաթը չպետք ե լցնել, այլ պետք ե լցնել այնքան, վորքան հարկացը դոր ե բորդոյան հեղուկ պատրաստելու համար:

Բայց ինչպես իմանալ, թե վորքան կրակաթ պիտի ավելացնել, վոր բորդոյան հեղուկը պատրաստվի: Դրա համար կարելի յե գործածել լակմուսի թուղթը:

Լակմուսի կարմիր թուղթը պղնձի արջասպի մեջ կարգիր ել մնում ե, իսկ կապույտ թուղթն ես կարմրում ե:

Նույն լակմուսի կարմիր թուղթը կրակաթի մեջ կապում ե, իսկ կապույտ թուղթը մնում ե կապույտ:

Լավ պատրաստած բորդոյան հեղուկի մեջ լակմուսի կապույտ թուղթը մնում ե կապույտ, իսկ կարմիրն ել մնում ե կարմիր, կամ ավելի շուտ՝ թե՛ կապույտը ե թե՛ կարմիրը դառնում են մանիշակագույն: Այդպիսի խառնուրդը կոչվում չեղովք:

Աւրեմն՝ բորդոյան հեղուկ պատրաստելու ժամանակ այնքան կրակաթ պիտի ավելացնել պղնձի արջասպի լուծույթին, վոր խառնուրդն ստացվի չեղովք, այսինքն՝ կրակաթը կամաց-կամաց ավելացնելով պղնձի արջասպի լուծույթին՝ խառնուրդը պիտի փորձել լակմուսի թղթով, և յեթե կապույտ թուղթը կարմրի, պիտի շարունակել կրակաթ ա-

վելացնելը, բայց յեթե այլիս չի կարմրում, իսկ կարմիրն էլ դառնում ե մանիշակագույն, կրակաթ ավելացնելը պիտի դադարեցնել, վորովհետեւ բորդոյան հեղուկն արդեն պատրաստ ե:

Բորդոյան հեղուկը պատրաստելու ժամանակ պիտի անդադար խառնել թե՛ պղնձի արջասպի լուծույթը և թե՛ կրակաթը: Յեթե կրակաթի ամբանի մեջ դեռ մնացել է կիր, սրա վրա նորից ջուր են ավելացնում, խառնում և շարունակում են լցնել պղնձի արջասպի լուծույթի մեջ, մինչև վոր չեղոքանա:

Հեղոքանալուց հետո նայում են, յեթե բերդոյան հեղուկը պատրաստելու ժամանակ չեն դործածել ամբողջ մեկ հեկտոլիտր ջուրը, այլ միայն յերեք քառորդը, այն ժամանակ մնացած մի քառորդ ջուրն ել ավելացնում են պատրաստած բորդոյան հեղուկի վրա և լավ խառնում:

Ահա ինչ ձևով ե, վոր պատրաստվում ե բորդոյան հեղուկը*):

Հաճախ այգեգործը իր ձեռքի տակ լակմուսի թուղթ չի սւնենում, ուրեմն ինչպես անել, վոր նա կարողանա լավ բորդոյան հեղուկ պատրաստել:

Բորդոյան հեղուկի պատրաստ լինելը ստուգելու համար յերբեմն խորհուրդ են տալիս վերցնել մաքուր դանակ կամ վորեկ յերկաթ կամ պողպատ ու թաթախել պատրաստվող խառնուրդի մեջ և խոկույն հանել: Յեթե այդ իրերը մի քիչ չորանելուց հետո կարմիր պղնձի գույն են ստանում, պիտի նորից կրակաթ ավելացնել, իսկ յեթե չեն կարմրում՝ կրակաթ չպետք ե ավելացնել:

Սակայն ձիչտ ե, վոր յեթե դանակը կարմրում ե՝ կիրը

*) Քանի վոր մեր այգեգործները լավ վարժված չեն չափերի մետրական սիստեմին, այստեղ բերում ենք բորդոյան հեղուկ պատրաստելու համար նյութերի անհրաժեշտ քանակը հին ուսական չափերով:

Մեկ վերը ջրին պետք ե վերցնել կես ֆունտ պղնձի արջասպ և այնքան կիր, վոր անհրաժեշտ և այդ պղնձի արջասպի լուծույթը չեղոքացնելու համար, (այսինքն լավ կրի գեղքում, մոտավորապես 1/4 Փունտ կիր):

Քիչ և ավելացրած, ուրեմն նորից կրակաթ պիտի ավելացնելոց բայց յեթե զանակը չի կարմրում՝ մեզ համար պարզ չի լինի, թե կրակաթ ավելացրած ե խառնուրդի հետ այնքան, վորքան, վոր անհրաժեշտ ե, թե չափազանց շատ ե ավալացրած, քանի վոր դանակը չի կարմրում վոչ միայն լավ պատրաստած (չեղոք) բորդոյան հեղուկի մեջ, այլ և մաքուր կրակաթի մեջ:

Ամենից լավն այն ե, վոր այգեգործը մի քանի անգամ լակմուսի թղթով լավ բորդոյան հեղուկ պատրաստի և իր աչքը սովորեցնի այն գույնին, վոր ունենում ե ամենաճիշտ կերպով պատրաստած (չեղոք) բորդոյան հեղուկը: Պղնձի արջասպի մեջ կրակաթ լցնելու ժամանակ խառնուրդի գույնն աստիճանաբար գեղեցիկ կապույտ գույն և ստանում, յերբ խական քանակությամբ կրակաթ ենք ավելացնում, այսինքն՝ յերբ ստանում ենք չեղոք բորդոյակ հեղուկ: Այդ հեղուկն ունենում է գեղեցիկ կապույտ գույն, բայց բավական ե նրան մի քիչ ել կրակաթ ավելացնել, իսկույն հեղուկը կղանա սպիտակալուն: Յեթե այգեգործի աչքը վարժվում է այդ գեղեցիկ կապույտ գույնին, նա յերբեք ամելի կրակաթ չի դործածի և առանց լակմուսի թղթի շատ լավ բորդոյան հեղուկ կպատրաստի:

Ի՞նչպես սրբիկը... Բորդոյան հեղուկը պիտի սրսկել այնպես, վոր տերեներն ամբողջովին ծածկվեն նրա մանր կաթիլներով: Իսկ յեթե տերեները ծածկվեն խոզոր կաթիլներով, ապա այդ կաթիլները հեշտությամբ տերեներից ցած կղլրվեն դետին ու տերերը կմնա առանց բորդոյան հեղուկի, այսինքն տերեները միայն կլվացվեն և կամ հեղուկի խոզոր կաթիլները տերերի մի տեղում հավաքվելով՝ միայն այդ տեղումն ել կչորանան, իսկ տերեի մնացած մասը միայն կլվացվի: Միլդյույի անկի սպորը չի ծլի միայն այն ժամանակի, յեթե նրա ծլելու համար հարկավոր ջրի կաթիլը թունավորված լինի: Յեթե ջրի կաթիլն ընկնի լվացած տերերի կամ նրա այն մասի վրա, վորտեղ բորդոյան հեղուկը չի մնացել, այդ ջրի կաթիլը չի թունավորվի, հետեւապես և սնկի սպորը կծլի ու տերերը կվարակի: Այդ պատճառով ել պիտի աշխատել, վոր տերեները ծածկվեն հեղուկի շատ մանր կաթիլներով և ամբողջովին:

Դրա համար հեղուկը պիտի սրսկել սրսկիչ մեքենայով և աշխատել մեքենայի խոզովակը վազից հեռու պահել և արագ անցնել: Տերեները լվացվում են, յերբ խոզովակը վազին շատ մոտ են պահում կամ միենույն տեղում յերկար են պահում:

Սրսկիչ մեքենաների շատ տեսակներ կան: Ամենից լավը պիտի համարել այն մեքենան, վորի քանդելն ու նորից հավաքելը հեշտ է, վորպեսզի այգեղործները հետությամբ կարողանան քանդել և պակասությունները վերացնել՝ առանց դրա համար վարպետի դիմելու: Ամենահարմարներից կարելի յե հանձնարարել վերմորելի «Եկլեք» կոչված դորժիքը:

Յե՞րբ սրսկել:-վերն ասացինք, վոր միլդյուն չի կարելի բժշկել, յերբ հիվանդությունն արդեն յերեացել է: Ուրեմն՝ բորդոյան հեղուկը պիտի սրսկել այն ժամանակ, յերբ վազը դեռ չի հիվանդացել: Վորպեսզի վազը միանդամայն ազատ լինի միլդյուից, պիտի նրա բոլոր տերեները, վողկույզները և ընդհանրապես աճող մասերը ծածկված լինեն բորդոյան հեղուկով: Գարնանը և ամառվա սկզբին վազն ամեն որ աճում է, նոր բողոքներ ու տերեներ ե տալիս: Այսպես, յեթե յերեկ վազը սրսկված է, այսոր կարող ենք նոր աճած, նոր դուրս յեկած ժաման ունենալ, վորոնք ծածկված չեն լինի բորդոյան հեղուկով, ուրեմն ե կարող են միլդյույով հիվանդանալ: Քանի վոր այդպես է, և մենք ուզում ենք վոր վոչ մի տերե չհիվանդանա, պիտի ամեն որ սրսկումներ կատարենք:

Բայց դա անհնար ե և ավելորդ, վորովհետեւ փորձը ցույց է տվել, վոր յեթե վորոշ հարմար ժամանակին են կատարվում սրսկումները, ապա հնարավոր ե սահմանափակել այդ սրսկումների քանակը և միանդամայն ազատել այգին միլդյուից:

Յե՞րբ և քա՞նի անգամ պիտի սրսկել, վորպեսզի այգին ազատ լինի հիվանդությունից, դա կախված է յերկրի կլիմայական և հողային պայմաններից: Այն յերկրներում, վորտեղ անձրեներ հաճախ են անդում և հողն ել խոնավ է, սրսկումների քանակն ավելի շատ ե լինում, քան չոր կլիմա առնեցող յերկրներում: Կան յերկրներ, վորտեղ նույնիսկ մինչև 12 անգամ են սրսկում, վոր բերքն ազատեն վոչնչանալուց, բայց և կան յերկրներ, վորտեղ 1 կամ 2 սրսկումն ել միովին բարպար ե:

Անձրևային տարիներին ավելի հաճախ պիտի սրսկել, քան չոր տարիները:

Սրսկումներ կատարելու համար ժամանակներն են՝

ա) Առաջին անդամ, յերբ վազի վրա լինում ե 7-8-9 տերե.

բ) Յերկրորդ սրսկում՝ ծաղկելուց մի քիչ առաջ.

գ) Յերրորդ սրսկում՝ ծաղկելուց մի քիչ հետո.

դ) Չորրորդ սրսկում՝ աճեցողությունը դադարելուց հետո:

Առաջին սրսկումը կարեռ է, վորովհետեւ գարնանը միլդյուն գարզանում և ընդհանրապես, յերբ վազը 11-12 տերե և ունենում, ուրեմն հնարավոր է մի քիչ առաջ սրսկել, վորպեսզի տերեները պաշտպանվեն:

Յերկրորդ սրսկումը կարեռ է, վորովհետեւ այդ ժամանակմիջոցում (ծաղկելուց առաջ) վազը մեծ աճեցողություն և ունենում, իսկ մեծ աճեցողության ժամանակ վազը շատ խոնավ է լինում, հետեւապես միլդյուի զարգացման համար վերին աստիճանի նպաստավոր պայմաններ են ստեղծվում:

Յերրորդ սրսկումը կարեռ է, խաղողը պաշտպանելու համար:

Չորրորդ սրսկումը կարեռ է վազը միլդյուից վերջնականապես ազատելու համար:

Իմ յերկար տարիների դիտողությունները ցույց են տրվել, վոր Արարատյան դաշտի այգիները կարիք չկա չորս անդամ սրսկելու. կարելի յե բավարարվել յերկու-յերեք կամ նույնիսկ մեկ սրսկումով, միայն թե այդ սրսկումները կատարվեն ժամանակին:

Առաջին սրսկումը կարելի յե կատարել ծաղկելուց մի քիչ առաջ, այս սրսկումը պետք է կատարել ապահովելու համար այգին միլդյուի վարակումից:

Յերկրորդ սրսկումը պիտի կատարել մոտավորապես հունիսի վերջերին: Հունիսի վերջերին կամ հուլիսի սկզբներին Արարատյան դաշտում միշտ անձրեներ են անդում, բայց այնպիսի անձրեներ, վորոնք աննկատելի յեն անցնում (աե՛ս յերես 19) Փորձված այգեգործը վորոշ դիտողություններ ու-

նենալով՝ կարող ե վորոշել մոտավորապես այդ անձրեների գալու որերը և զբանից 2-3 որ առաջ սրսկել այդին։ Իսկ ով այդ փորձառություն չունի, պիտի սրսկի մոտավորապես հունիսի 20-29-ին։ *)

Այս սրսկումից հետո այլևս նոր սրսկում չպիտի կատարել, յեթե յեղանակները միլդյուի տարածման համար նպաստավոր չեն։

Բայց յեթե տարին անձրեային կամ մառախլապատ լինի և յեթե միլդյուն շրջակայքում ուժեղ կերպով տարածվելիս լինի, պիտի յերրորդ սրսկում ևս կատարել, յերրորդ սրսկումից 3-4 շաբաթ հետո։

Այսպիսով, հնարավոր ե այդին միանգամայն փրկել միւրյուից։

Այստեղ ել պիտի հիշել մի թյուրիմացության մասին, վոր շատ ե տարածված։ յերբ յեղանակն այնպես է, վոր անձրե և սպասվում, շատ այգեգործներ չեն սրսկում վախենալով, թե անձրեը զարուց բորդոյան հեղուկը կտանի, ուրեմն և ծախսը զուր կանցնի։ Հենց այս ե վոր սիսալ ե։

Անձրեի ժամանակն ե, վոր միլդյուի սպորը ծլում է անձրեի կաթիների մեջ, իսկ բորդոյան հեղուկը սրսկում են հենց այդ անձրեների կաթիլը թունավորելու համար։ Յերբ անձրեային որերն անցնեն, այսինքն՝ յերբ վազի վրա ջրի կաթիլ դոյանալու հնարավորություն այլևս չի լինի, այն ժամանակ բորդոյան հեղուկն ել ավելորդ ե, վորովհետեւ վարակումն արդեն կատարված կլինի։ Իսկ յերբ կարելի կլինի մոտավորապես վորոշել թե անձրե և զարու, պիտի շտապել այդին սրսկել։ Բավական ե, վոր այդ սրսկումից հետո մի կես ժամ արել լինի, վոր սրսկածը չորանա, այլևս անձրեր նրան չի լվանա և վաղը շատ յերկար ժամանակ, նույնիսկ մինչև աշուն պաշտպանված կլինի միլդյույից։

Խաղողի վաղկույզը պաշտպանելու հատուկ միջոց.-Լավ է համարվում այն բորդոյան հեղուկը, վոր կալչելու հատկություն ունի։ Վորչափ բորդոյան հեղուկը լավ կաչի վազի վանագան մասերին, այնքան ավելի աղղեցիկ կլինի։ Բորդո-

*) Պատահել ե, վոր այդ անձրեները լիղել են հուլիսի 10-14-ը։ Հարկավ, այդ ժամանակ ավելի լավ կլինի սրսկել հուլիսի 6-9-ը։ 1929 թ. հարկավոր լեզար յերկրորդ սրսկումը կատարել հուլիսի 17-24-ը։

յան հեղուկը շատ լավ կտշում ե տերեներին, բայց գլորվում, թափվում ե խաղողի հատիկներից, այդ պատճառով ել աղղեցությունը պակասում է։ Խաղողի հատիկները ծածկված են մի տեսակ մոմով և այդ պատճառով ել նրա վրա հեղուկը չի կանգնում։

Վորպեսպի խաղողը նույնպես թրջվի և նրա վրա բորդոյան հեղուկը մնա-չորսնա, պիտք ե պատրաստած բորդոյան հեղուկի մեջ բաց անել մի քիչ ոճա։

Թե ի՞նչքան ոճառ պիտի ավելացնել, այդ ել կախված և նրա հատկությունից։ Նախ՝ պետք ե քիչ քանակությամբ ոճառ լուծել բորդոյան հեղուկի մեջ և հետո վերցնել մի վողկույզ և թաթախել նրա մեջ։ Յեթե յեղուկը չի մնում խաղողի հատիկի վրա և թափվում ե, պիտի նորից ոճառ ավելացնել և աստիճանարար ավելացնել այնքան, մինչև վորպական թրջվի, այսինքն՝ հեղուկը մնա խաղողի հատիկների վրա։

Ընդհանրապես մեկ հեկտոլիտար հեղուկին 800 գրամից մինչև մեկ կիլոլիտամ (դույլին մեկ քառորդ գրվանքառ ոճառ) բավական կլինի։ Ոճառ կարելի յե գործածել թե՛ կանոչը և թե՛ սովորական լվացքինը։

Այս ձեռվ պատրաստած բորդոյան հեղուկը շատ լավ և պաշտպանում խաղողի վողկույզները միլդյույից։ Անհամաշեշտ և այլպես անել մանավանդ այն գեպքերում, յերբ միւրյուից դոյան գլխավորապես խաղողն ե վնասվում։

Բորդոյան հեղուկը և առողջապահությունը.-Հաճախ հարց են տալիս, թե բորդոյան հեղուկով սրսկելուց հետո խաղողը չի վնաս է վաղը շատ յերկար ժամանակ, նույնիսկ մինչև աշուն պաշտպանված կլինի միլդյույից։

Տերեների վրա նստած հեղուկը շատ յերկար ե մնում, և շատ անգամ տերեաթափի ժամանակ իսկ տերեները ծածկված են լինում հեղուկի մնացորդներով։ Բայց խաղողը մեծանալով՝ իր վրա չի պահում այդ հեղուկից և հասած ժամանակ բոլորովին մաքրված ե լինում, ուստի և ուսողներին վոչ մի վնաս չի պատճառում։ Ապացույց, վոր բորդոյան հեղուկով սրսկած խաղողը վոչ մի վնաս չի պատճառում, այդ այն ե, վոր ամբողջ աշխարհում, վորտեղ միլդյուու յերեացել ե, այդիները սրսկում են բորդոյան հեղուկով, շատ տեղերում սրսկում են նույնիսկ տարեկան 6-7 անգամ և յեր-

բեք չի պատահել, վոր սրբակված խաղողից մարդ թունավորված լինի:

Բորդոյան հեղուկից յերբեմն մի քիչ մնում ե խաղողի չանչի վրա, այդտեղից խաղողը տրորելու ժամանակ մի քիչ անցնում ե քաղցույն (շիրային), բայց գինի դառնալիս նըստում ե տիրմեջ և գինու մեջ կարելի յե միայն հետքեր գտնել, ուստի գինին ևս միանգամայն անվնաս ե:

Հատ տեղերում սովորություն կա այդեկութից հետո անասուններն այցում արածացնելու արդյոք այդ անասունները չե՞ն վնասվի սրսկված տերեններն ուտելուց: Փորձը ցույց ե տվել, վոր չնայած տերենների վրա յերբեմն շատ մեծ քանակությամբ արջասպ է մնացած լինում, բայց և այնպես անասուններն ամենևին չեն վնասվում դրանից:

1909 թվին յես տեսել եմ մի տնտեսություն, վորտեղ պահում եյին 30 կով: Դրանց կերակրելու համար, աշնան ետք կատարելուց հետո (այդտեղ ձմեռը տաք լինելու պատճառով ետք կատարում եյին աշնանը կամ ձմբան սկզբին), հավաքում եյին բոլոր արքադը, տերեններն ու լավ ջարդում հատուկ մեքենայով ու սիլոս պատրաստում:*)

Այդին ամեն տարի մի քանի անգամ սրսկվում եր բորդոյան հեղուկով, վորից բավական մեծ քանակությամբ անցնում եր սիլոսի մեջ:

30 տարուց ի վեր այդ տնտեսության մեջ այդ ձևով կովեր կերակրելով, յերբեք չի պատահել, վոր կովերից մեկն ու մեկը հիավանար կամ վնասվեր:

Բայց ափսոս, վոր անասունները չեն վնասվում այդպիսի տերեններն ուտելուց. այդ հանգամանքը գոնե կստիպեր մեր անասունատերերին, իրենց անասուններն այդեկութից հետո (շատ անդամ նույնիսկ առաջ) այդիների մեջ չարածացնել և չփչացնել այդեղործի ինամած վազերից շատ-շատերը, ըրտորել մատղաշ տնկիները, այդու հողը, չքանդել թմբերը:

*) Սիլոս անվանում են այն հարմարությունը, վորտեղ պահում են նախորդ ջարդած կամ չչարգած և խմորման լենթակա բուլսերը՝ անս սուններին կերակրելու համար:

Ո Ւ Ղ Ի Ո Ւ Ղ

Այս հիվանդությունն ել միլդյուփի պես անցյալներում մեղ մոտ չի յեղել. յեկել ե գարձյալ Ամերիկայից: Յեվրոպայում ոիդիում ամենից առաջ յերեացել ե Անգլիայում—(1845 թվին) մի ջերմոցում, հետեւյալ տարին նա անցել ե ֆրանսիա և այնտեղից տարածվել ամեն տեղ ու յեկել-հասել ե մեզ:

Ոիդիումն ել միլդյուփի պես լինում ե վազի միայն աճող մասերի վրա և յերբեք չի զարգանում վազի փայտացած, հասած մասերի վրա:

Հայաստանի այգեգործները շատ լավ նկատել են, վոր «սեր» խաղողը փչացնում ե քանի նա հասած չի, իսկ հասած փաղողին այլևս վորեւ վնաս չի պատճառում:

Ոիդիումի նշանները.—Երբիումի նշաններն են. տերեկի վրա առաջ են գալիք սայնպիսի բծեր, ինչպիսի բծեր լինում են միլդյուփի ժամանակ, միայն այն տարբերությանմբ, վոր այդ բծերը տերեկի յերեսի կամ տակի կողմից ծածկվում են վոչ թե սպիտակ, այլ մոխրագույն փոշով, մինչդեռ միլդյուփի դեպքում փոշին անպատճառ տերեկի տակի կողմից ե լինում և սպիտակ գույնի:

Ոիդիումի փոշին տերեկից հեշտությամբ սրբվում ե, բայց նրա տեղը ու հետք ե մնում: Նույնպիսի մոխրագույն փոշով և ծածկվում չիվը, յերբ այդ չիվը հասունանում և փայտանում ու դառնում ե մատ, փոշին վերջանում ե, բայց փոշու տեղը վայտի վրա մնում են սև բծեր: Այդ սև բծերը մատի վրա յերկար ժամանակ մնում են և, ահա, դրանցով հետեւյալ զարնանը, ետի ժամանակ, շատ հեշտությամբ կարելի յե վորոշել այն վազերը, վորոնք նախորդ տարին հիվանդացած են յեղել ոիդիումով:

Վաղի թելիկների և խաղողի կոթի վրա ոիդիումը նույն կերպ է արտահայտվում, ինչպես շվի կամ մատի վրա:

Խաղողի հատիկները ևս ծածկվում են մոխրագույն փոշով, վորի հետևանքով, յեթե ոիդիումը շատ չուտ է սկսվել, Խրանք այլևս չեն մեծանում, այլ չորանում են: Բայց յեթե ոիդիումն ավելի ուշ ե սկսվել, այսինքն՝ յերբ հատիկները բավականին մեծացել են, այդ դեպքում խաղողի հատիկի կլեպը կորցնում է իր առաձգականությունը և վորեւ տեղում պատռվում: Ահա զբանից ե, վոր ստացվում են վողկույզներ՝ ճաքած հատիկներով: Հաճախ այդ ճաքած տեղերից յերեսում են խաղողի կորիզները (տես նկար 8): Ոիդիումի հատկանշական կողմն այն է, վոր նա ունի սնկի հոտ:

Ոիդիումի պատճառած վնասները.—Յեթե ոիդիումը դարձանում է տերեւների վրա, ապա հաճախ այդ տերեւները չորանում, թափում են, դրա հետևանքով վաղը լավ չի հասունանում, հետևապես ձմռան ցրտերին դժվար է դիմանում և հետևյալ տարին բերք քիչ է տալիս: Սակայն Հայաստանում օիդիումը տերեւի վրա շատ քիչ է լինում, հետևաբար, տերեւին հասցրած նրա վնասը չնչին է:



№ 8. Ոիդիումով
վարակված վողկուզիկ.

Նույնպես քիչ է օիդիումի մատին հասցրած վնասը, թեև յերեմն օիդիումով վարակված մատերը չեն հասունանում:

Սակայն մեծ է օիդիումի խաղողին հասցրած վնասը: Ինչպես վերն առվեց, հատիկները սև փոշով ծածկվելով՝ կամ

չորանում են կամ ճաքածքում. յերկու դեպքումն ել բերքը պակասում է: Պատահել են տարիներ, յերբ վորոշ շրջաններում բերքի վոչ թե կեսը, այլ և յերեք քառորդը և նույնիսկ ամբողջը վոչնչացել է ոիդիումից:

Ի՞նչից ե առաջ գալիս ոիդիումը. Ոիդիումը միլդյույի պես սնկային հիվանդություն է: Ոիդիում առաջ բերող սունկը տարբերվում է միլդյու սնկից նրանով, վոր նա արտաքին պարագիտ է, մինչդեռ միլդյուինը ներքին պարագիտ է:

Մինչդեռ միլդյուի սունկը սովորել վորդի պես տեղափորվում է խաղողի վազի մարմնի մեջ ու այնպես սնվում, ոիդիումի սունկը, ինչպես տիզ, կպչում է խաղողի վազին և նրանից հյութը քաշում: Ոիդիումի սունկը շատ նմանվում է խաղողի վազդին, կամ ինչպես շատերն են ասում՝ գելուկին կամ ժիշկին: Ինչպես դադան է փաթաթվում վազին և ծծում նրա հյութը, նույնպես ոիդիումի սունկն իր թելանման մարմնով փաթաթվում է վազի կանաչ կամ աճող մասերին՝ չվին, տերեւին, խաղողին և այլն և այդ թելերի վրա գտնված ծծիչներով ծծում է շվի, տերեւի, խաղողի հյութը:

Նույն այդ թելերի վրա առաջ է գալիս մոխրագույն փոշի, վորը վոչ այլ ինչ են, յեթե վոչ օիդիումի սպորները, վորոնց միջոցով հիվանդությունը տարածվում է ամառվարնթացում:

Թե՛ այդ փոշին և թե՛ սնկի թելերը ցրտի չեն դիմանում, նրանք վոչնչանում են աշնան վերջը կամ ձմռան հենց սկզբին: Սակայն, նախ քան թելերի վոչնչանըը, նրանց մեջ առաջ են գալիս սնկի պտուղներ, վորոնք դիմանում են ձմռան սառնամանիքներին: Այդ պտուղի մեջ գտնված հատուկ տոպրակներում պահպանվում են սպորներ, վորոնք գարնանն առաջ են բերում նոր վարակումներ:

Ոիդիումի զարգացմանը նպաստող պայմանները.—Առողջ վազը կարող է օիդիումով վարակվել միայն օիդիումի սպորի միջոցով: Ոիդիումի սպորն ևս միլդյուի սպորի նման իր ծլելու համար պահպանվում է խոնավություն և ջերմություն: Ամենանպաստավոր ջերմությունը օիդիումի սպորների ծլելու և հիվանդության զարդացման համար 25° է: Դատուժեղ շոգերին օիդիումի զարգացմանը կանգ է առնում: Ոիդիումը շատ ուժեղ զարգանում է, յեթե բարձր ջերմության

Հետ միասին ողի մեջ խոնավություն ել լինում։ Տոթ որերին, յերբ յերկինքն ամպամած ե, ոիդիումը զարգանում ե ուժեղ կերպով։

Ոիդիումը միլդյուից տարբերվում ե նրանով, վոր միլդյուի սպորն իր ծլելու համար պահանջում ե անպատճառ ջրի կաթիլի ներկայություն, մինչդեռ ոիդիումի սպորը ծլում ե առանց ջրի կաթիլի յել, միայն թե ողի մեջ խոնավություն լինի։

Յեթե խաղողի վրա ցող չի նստում, կամ յեթե անձրեւ չի դալիս, միլդյուն չի կարող վարակում առաջ բերել, մինչդեռ առանց անձրեի կամ առանց ցողի յել ոիդիումը կվարակի խաղողը, միայն թե ողի մեջ վորոշ խոնավություն լինի։

Յեթե խաղողի վրա ցող չի նստում, կամ յեթե անձրեւ չի դալիս, միլդյուն չի կարող վարակում առաջ բերել, մինչդեռ առանց անձրեի կամ առանց ցողի յել ոիդիումը կվարակի խաղողը, միայն թե ողի մեջ վորոշ խոնավություն լինի։

Խոնավ տեղերում, շատ ջրած այդիներում ոիդիումն, ինչպես և միլդյուն ավելի ուժեղ են զարգանում, քան չոք հողերում կամ սակավ ջրած այդիներում։

Նույնպես խոտակալած այդիներում ավելի քիչ ոիդիում ե լինում, քան լավ մշակած, քաղանած այդիներում (բացատրությունը տե՛ս յերես 21)։

Փոփոխակների դիմացկանությունը ոիդիումին։—Կան խաղողի փոփոխակներ, վորոնք շատ հետությամբ են հիվանդանում ոիդիումով։ Պրանց թվին ե պատկանում մեր խարջին, վոր ոիդիումի տարիներին շատ մեծ տոկոսով փչանում ե։

Կան և այնպիսի փոփոխակներ, վորոնք ոիդիումով չեն հիվանդանում։

Ամերիկյան տեսակներին պատկանող փոփոխակները ոիդիումին դիմանում են։

Ոիդիումին համեմատաբար դիմացկուն ե նաև Համարլույի շրջանում մշակվող՝ «կախեթ» կոչվող սև խաղողը։

Ի՞նչպես կովել ոիդիումի դիմ։—Միլդյուի դեմ պայքարելու մասին խոսելիս ասացինք, վոր յեթե միլդյուն մտել է վաղի մեջ, մենք այլևս վոչինչ անել չենք կարող։ Ոիդիումի

առնկը վազի մեջ չի մտնում, այլ դրսից ե լինում։ Հետեւքար՝ ոիդիումի դեմ պայքարել կարելի յե և այն ժամանակ, յերբ նա արդեն վարակել ե խաղողը կամ ընդհանրապես վաղը։

Առել ե՝ յեթե միլդյույով հիվանդ վազն այլևս հնարավոր չե բժշկել (մենք միայն կանխում ենք հիվանդությունը), ոիդիումով վարակված վազը դեռ կարելի յե բժշկել։

Ոիդիումով վարակված վազը կարելի յե բժշկել միայն այն ժամանակ, յերբ հիվանդությունը դեռ այնքան չի ուժեղացել, վոր վարակված մասերը փչացած լինեն։

Վորքան ել հնարավոր լինի ոիդիումով նոր վարակված այդին բժշկել, այնուամենայնիվ ավելի ձեռնտու յե հիվանդության առաջն առնել, թույլ չտալ, վոր նա այգում տաքածվի, քան սպասել, վոր հիվանդությունն սկսվի և ապա բժշկել, վորովհետեւ սկսվելուց հետո հիվանդությունը շատ հաճախ այնքան արագ ե տարածվում, վոր այգեգործը հնարավորություն չի ունենա այգին բժշկելու։

Ոիդիումը բժշկելու կամ նրա առաջն առնելու համար գործ են ածում ծծումը։

Ծծումբի ազդեցությամբ թառամում, չորանում են ոիդիումի մարմինը կազմող թելիկները և այդ ձեռվ աղատվում ե վազի վարակված մասը հիվանդությունից։

Ծծումբի ազդեցությամբ չորանում են նաև ոիդիումի ապորները և այսպիսով վազն աղատվում է վարակվելուց։

Այսպիսով, ծծումբը միաժամանակ հանդիսանում է վորպես հիվանդության առաջն առնող ու հիվանդությունը բժշկող միջոց և դրանով տարբերվում է բորդոյան հեղուկից, վոր միայն հիվանդության առաջն առնում և յերեք հիվանդությունը չի բժշկում։

Այդիները բժշկելու համար գործ են ածում յերկու պետակ ծծումբ-թորած և ջարդած։

Թորած ծծումբը (կամ ծծմբի ծաղիկը) ստացվում ե թորման միջոցով, հենց այնպես, ինչպես ողին ստացվում ե թորման (քաշելու) միջոցով։

Զարդած ծծումբն ստացվում է կոչտ ծծումբը ջարդելու կամ աղալու միջոցով։

թորած ծծումքը շատ նուրբ է, թեթև, արագ գաղացող, հետեաբար և արագ ազդող:

Ընդհակառակը, ջարդած ծծումքը ծանր է, կոչտ գժվարությամբ գազացող, հետեաբար ուշ ազդող:

Հաշվել են, վոր միևնույն ազգեցությունն ստանալու համար, սովորական տարիներին, հարկավոր ե յերկու անգամ ավելի ջարդած ծծումբ գործածել, քան թորած: Իսկ այն տարիներին, յերբ ոիդիումի զարգանալու համար խիստ նպաստավոր պայմաններ են լինում, կրկնակի քանակությունից ե՛լ ավելի պիտի վերցնել: Այս նշանակում է, վոր յեթե ջարդած ծծումքը կրկնակի աժան լինի, այնուամենայնիվ նախապատվությունը պիտի տալ թորած ծծմբին:

Յե՞րբ պիտի պայքարել ոիդիումի դեմ.—Ոիդիումը կարող ե զարգանալ նույնիսկ այն ժամանակվանից, յերբ չվի վրա արդեն 5-7 տերեւ ե լինում: Հետեաբար, առաջին անգամ ծծումբ պիտի փչել, յերբ վազի վրա 3-5 տերեւ կա: Այնուհետեւ, նայած յեղանակին և տեղին, կարող ե պատահել, վոր 2-3 շաբաթը մի անգամ հարկավոր լինի ծծումբ փչել: Վերջին ծծումքը պիտի տալ խաղողալիցից մի քիչ առաջ:

Խաղողալիցի ժամանակ կամ նրանից հետո այլևս ծծումբ չպետք ե փչել, վորովհետև հասնող և հասած խաղողն այլևս ոիդիումով չի հիվանդանում:

Սովորաբար այդքան հաճախ ծծումբ փչելու կարիք չի զգացվում: Առաջին ծծումբ տալուց հետո, յերկրորդ անգամ ծծումբ պետք ե տալ խաղողը ծաղկելու ժամանակ: Ծաղկելու ժամանակ ծծումբ փչելը վոչ միայն այն նշանակությունն ունի, վոր այդ ժամանակ, ընդհանրապես, ոիդիումի տարածման համար նախատավոր ուղարմաններ են լինում, այլև այն, վոր ծծումբ փչելը նպաստում ե ծաղկիների բեղմնավորման և դրանով ծաղկավիժման տուածն առնում ե, այսինքն՝ ծաղկեները փուչ չեն զուրս գալիս, լավ վողկույզներ են ստացվում:

Յերբորդ անգամ հարկավոր ե ծծումբ փչել ծաղկելուց 2-3 շաբաթ հետո, չորրորդ անգամ խաղողալիցից 2-3 շաբաթ առաջ: Արանով կարելի յե բավարարվել, յեթե յեղանակները շատ խոնավ չեն, հակառակ դեպքում՝ կարելի յե մեկ, յերկու կամ նույնիսկ յերեք միջանկյալ բժշկություն ևս կատարել:

Արարատյան դաշտի պայմաններում փորձը ցույց է տվել, վոր առաջին անգամ ծծումբ պիտի փչել խաղողը ծաղկելու ժամանակ, դրանից շուտ փչելը միտք չունի:

Յերկրորդ անգամ ծծումբ պիտի փչել մոտավորապես հունիսի վերջերին կամ հուլիսի սկզբներին, այսինքն՝ այն ժամանակ, յերբ միլդյույի դեմ պիտի կատարել բորդոյան հեղուկի յերկրորդ սրսկումը (տե՛ս յերես 29): Այս անգամ կարելի յե հենց նույն որը նաև բորդոյան հեղուկ սրսկել միլդյույի դեմ, ապա տերեկների վրա հեղուկը չորանալուց հետո՝ ծծումբ փչել ոիդիումի դեմ:

Արարատյան դաշտում այս յերկու ժամակետներին ոիդիումի դեմ կատարած բժշկությունը լիուլի բավական է: Սակայն, յեթե հետագայում յեղանակները նպաստավոր լինեն ոիդիումի տարածման համար և այդիներում ոիդիումն ուժեղ կերպով տարածված լինի, մի յերրորդ անգամ ևս կարելի յե ծծումբ փչել, յերկրորդ անգամ փչելուց 2,3,4 շաբաթ հետո, նայած տարվա յեղանակին:

Շատերը չիմանալով, վոր ոիդիումը խաղողալիցից հետո խաղողի վրա չի զարգանում, ծծումբ են փչում հասած խաղողին: Այդ վոչ միայն ավելորդ ծախս է, այլև շատ դեպքում նույնիսկ վնասակար է, վորովհետև խաղողի վրա մնացած ծծումքը, խաղողը տրորելու ժամանակ մտնում ե քաղցույցի (շիրայի) մեջ և հետագայում գինուն տալիս ե հոտած ձմի համ, վորի առաջն առնելը հետագայում շատ դժվար է լինում:

Որվա վո՞ր ժամերին ծծումբը փչել:—Կան խաղողի փոփոխակներ, վորոնց տերեները ծծմբի ազգեցության տակ այրվածքներ են ստանում, մանավանդ, յերբ ծծումբ են փչում որվա ամենաշոգ ժամերին: Այս պատճառով խորհուրդ են տալիս ծծումբ փչել մինչեւ առավոտյան ժամը 9-10-ը և յերեկոյան՝ 5-ից հետո:

Սակայն կան փոփոխակներ, վորոնք ծծմբին լավ են գիմանում, նույնիսկ, յեթե որվա ամենաշոգ ժամերին են ծծումբ փչում:

Արարատյան դաշտի խաղողի փոփոխակները դիմանում են ծծմբին: Փորձը ցույց է տվել, վոր հուլիս ամսի շողերին, նույնիսկ ժամը 3-ին ծծումբ փչած այդիներում տերեւ

ների վրա այրվածքներ չեն յեղել: Ուստի այստեղ հնարավոր և ծծումբ փշելովա բոլոր ժամերին ել:

Սակայն, յերբեմն կարող ե պատահել, վոր այդին շատ ծարավ լինի և ծծումբը այրվածքներ առաջացնի: Այսպիսի այրվածքներ շատ անգամ առանց ծծումբ փշելու ել տեղի յեն ունենում, յերբ այդին ծարավ ե: Մեր փորձված այդեղործներից շատերը նման որերին ու ժամերին թույլ չեն տա, վոր այդի մտնեն, վորովհետեւ թե տերեները և թե խաղողը կարող են արևահար լինել:

Կամի այլ հարց, թե յե՞րբ ե լավ ծծումբ փշելու համար, յերբ վազի վրա ցո՞ղ կա նստած, թե՞ յերբ ցողը չորացել ե:

Կան յերկրներ (*որինակ Ֆրանսիայի հյուսիսում*), վորտեղ ծծումբ են փչում քանի վոր ցող կա և ասում են, վոր առանց ցողի ծծումբ փշելը լավ չե: Կան և այնպիսի յերկրներ (*որինակ Ֆրանսիայի հարավը*), վորտեղ ցող նստած ժամանակ յերբեք ծծումբ չեն փչում և ասում են, վոր ցողի ժամանակ փշելը լավ չե:

Վո՞րն ե ճիշտ:

Յերկուսն ել ճիշտ են, նկատի ունենալով իրենց յերկրի պայմանները: Այնտեղ, վորտեղ վազեր փոքր են (ինչպես ֆրանսիայի հյուսիսում), ցողը հնարավորություն ե տալիս վոր ծծումբը տերեներին կպչի: Այդ ծծումբը տերեներին ու խաղողին մոտ լինելով՝ ավելի լավ ե աղջում:

Իսկ այնտեղ, վորտեղ վազը փարթամ աճեցողություն ունի, այնպես, ինչպես մեզ մոտ՝ Արարատյան դաշտում, յեթե ծծումբ փշելու լինենք ցող նստած ժամանակ, ծծումբը կնստի թփի արտաքին տերեների և շվերի վրա և հնարավորություն չի ունենա ներս թափանցելու: Պարզ ե, վոր այս դեպքում անհամեմատ ավելի լավ է, վոր ծծումբ փչփի չոր ժամանակ: Փոշին ամեն տեղ թափանցելով՝ ավելի լույլ կպաշտպանի թե՛ տերեները և թե բերքը:

Ի՞նչպես փշել ծծումբը՝ կան հատուկ ծծմբահար փուքակը, վորոնց միջոցով հնարավոր ե խաղողի վազերը ծածկել ծծմբի շատ բարակ փոշիով: Կան ձեռքի փուքսեր, վորոնք ծծումբը համաշափի բաշխելու տեսակետից վատ չեն, բայց վորոնք շատ շուտ հոգնեցնում են աշխատավորին: Ավելի լավ ե զործածել մեջքի փուքսեր, վորոնցով աշխատանքն ա-

վելի արագ ե կատարվում և աշխատողին չուտ չեն հոգնեցնում:

Շատ տեսակների մեջքի փուքսեր կան. ամենից հարմարն այն փուքսերն են, վոր սրակիչների պես հետությամբ կարելի յե քանդկել և հետությամբ ել հավաքել: Այսպիսիներից ե որինակ՝ վերմորելի «Տորպիլ» և Պլատցի «Գրյուն» կոչված ծծմբահար փուքսերը:

Կալի հիպերմանգանիկում.՝ Բայցի ծծմբից կան և ուրիշ նյութեր, վոր կարելի յե զործածել ոիդիումի դեմ պայքարելու ժամանակ: Այդպիսիներից ե կալի հիպերմանգանիկումը, վոր շատ լավ միջոց ե ոիդիումի դեմ պայքարելու համար, յերբ վերջինս արագ և ուժեղ կերպով սկսել ե վարակել այդիները:

Սակայն կալի հիպերմանգանիկումն ունի մի մեծ պակասություն: Մինչեւ ծծումբը միաժամանակ և հիվանդակառնությունը բժշկում, գության առաջն ե առնում և հիվանդությունը բժշկում, կալի հիպերմանգանիկումը միայն բժշկում ե, բայց հիվանդության առնը չի առնում: Այդ, այսպես կոչված կանոնական գեղ ե, այսինքն՝ այնպիսի դեղ, վոր պետք ե անպատճառ գեղ ե, այսպիսի պայմանը առաջ բերող սնկին, վորպեսզի նրան կպչի հիվանդություն առաջ բերող սնկին, վորպեսզի նրան գոյնչացնի: Հակառակ դեպքում՝ հիվանդությունը կշարունակվի: Ծծումբն, ինչպես ասվեց, գազ ե արձակում և գրանակվի: Ծծումբն, ինչպես ասվեց, գազ սպանում ե հիվանդություն առաջ բերող սնկին (*ուրեմն տերևը, խաղողը, շիվը-առողջանում են*), նույն այդ գազը սպանում ե այն սպորները, վորոնցից պիտի առաջ գային սնկերը (հետևաբար, յերբ մի տեղ ծծումբ կա, վոր գազ ե արձակում, այդտեղ խաղողի վազը, տերեները, խաղողը, շիվը չեն հիվանդանում): Բայց կալի հիպերմանգանիկումն սպանելով արդեն գոյություն ունեցող սունկը և այդ ձեռվ սպասելով վազի առողջանալուն՝ հնարավորություն չի ունենում հետագայում ուրիշ տեղից յեկած սպորների վրա աղցելու, հետևապես աղատելու խաղողի վազը հիվանդությունից:

Այդ տեսակետից ծծումբը չափազանց կարևոր նյութ ե և բարձր ե կալի հիպերմանգանիկումից:

Բայց ծծումբն աղցում ե իր գազերով, և վորպեսզի գազ առաջ գա, անհրաժեշտ է ժամանակ և մանավանդ ջերմությունից:

Թյուն: Վորչափի ջերմությունը բարձր է, այնքան ավելի՝ առագ և ավելի շատ դադեր առաջ կդան, ուրեմն և ծծմբի աղցեցությունն ավելի արագ և մեծ կկինի:

Յերբ ոիդիումն սկսվել է հանկարծ և ուժեղ կերպով, յեթե անմիջապես ծծումը փչվի և մինչև դադեր տա, ոիդիումի սունկը կարող է զարդանալ և արդեն չորացնել բերքի մի մասը: Արագ կերպով ոիդիումի վրա ազդեցու համար անհրաժեշտ է կալի հիպերմանգանիկումով լավ սրսկել հիվանդ վողկույզները և շիվերը, ապա ծծումը փչել: Արսկելուն պես սունկը կվոչնչանա, իսկ հետո ծծումը կապահովի բերքն ապագա վարակումից*):

ԲԺԱՎՈՐ ԱՆՏՐԱՔՆՈԶ

Անտրաքնոզը՝ հին կոչված աշխարհի շատ հին հիվանդություն ե. այն գոյությունն և ունեցել Հռոմայեցիների ժամանակ ևս:

Նկատված է, վոր յերբ մի հիվանդություն մի յերկրում գոյություն ունի շատ՝ հին ժամանակներից, այնքան ել վնասակար չի լինում: Նույն այդ հիվանդությունը յեթե տարածվում և մի նոր յերկիր, վորտեղ առաջներում չի յեղել, շատ մեծ վնասներ ե հասցնում:

Միլլյուն, ոիդիումը, Փիլլոքսերան ուրիշ տեղից (Ամերիկայից) գալով մեզ մոտ՝ սոսկալի վնասներ են պատճառում մեզ:

Բայց անտրաքնոզը, վոր մեր այդիների հին հիվանդություններից ե, այնքան մեծ վնաս չի հասցնում: Վորոշ տեղերում, վորոշ տարիներին և հաճախ միայն վորոշ փոփոխակների վրա յե զարդանում անտրաքնոզը և այն ել այն ժամանակ, յերբ նրա զարդացման համար հատուկ նպաստավոր պայմաններ են ստեղծվում:

Արարայան գաշտի այդիներում անտրաքնոզ համարյամեն տեղ կա, բայց պատճառած վնասը քիչ ե:

Միայն Դուրդուղություն շրջանումն ե (հատկապես Գեղրլու գյուղում), վորտեղ անտրաքնոզը մի քիչ ավելի վնաս և հասցնում: Կովկասի վորոշ տեղերում ևս լինում ե անտրաքնոզ, բայց վոչ մի տեղ նրա հասցրած վնասը չի կարելի համեմատել վոչ միլլյույի և վոչ ոիդիումի հասցրած վնասների հետ:

Անտրաքնոզի նշանները՝ չինվանդությունը լինում և վազի բոլոր կանաչ մասերի վրա:

Տերեփների վրա առաջ են գալիս փոքրիկ բծեր, վորոնք սկզբում կոլոր են լինում, իսկ հետագայում արդեն դառնում


*.) 1924 թվին Յերևանում մի յերկու այդում ոիդիումի գեմ այդ ձեռք պայքար տարվել է և արդյունքը յեղել է միանգամայն դրական:

Մեկ հեկտարի ջրին պետք է վերցնել 100 գրամ կալի հիպերմանգանիկում և դրանով սրսկել:

են անկանն։ Այդ բծերն սկզբում գալուկ-կանաչ են լինում, հետզհետե դառնում են զեղին և ապա ընդունում են չոր տերեկ դույն։ Շուտով այդ բծերը պատռվում են, վորի հետեանքով տերեկի մեջ առաջ են գալիս անկանոն ծակոտի՝ շուրջը սև յերիդով։

Նույնպիսի բիծ առաջ են գալիս չվի վրա, բայց չվի վրայի բծերը կլոր չեն լինում, այլ յերկարավուն։ Շուտով բծի վրա առաջ են գալիս ճեղքեր և այսպիսով չվի վրա ստացվում են վերքեր, վորոնք շատ նման են կարկտից առաջ յեկած վերքերին (նկ. № 9)։

Կարկտի վերքերի և անտրաքնողի վերքերի մեջ այն տարբերությունը կա, վոր կարկտի դեպքում չվի վրա վերքերը դասավորված են լինում միայն մի կողմից, այսինքն՝ այն կողմից, վորտեղից կարկուտը խիել է, իսկ անտրաքնողի դեպքում վերքերը նույն չվի վրա լինում են ամեն կողմից։



№ 9. Բծավոր անտրաքնող. 1.—տերևի վրա,
2.—խաղողի վողկույզի վրա, 3.—հատիկի վրա, 4.—շիկի վրա.

Խաղողի հատիկների վրա նույնպես առաջ են գալիս բըծեր՝ սև յերիդով շրջապատված։ Այդ բծերը հաճախ ճաքում են, խաղողի հյութը գոլորշիանում են, կամ զանազան միկրոբների աղղեցության տակ քայլայվում։

Այսպիսով, անտրաքնողի հասցրած վնասը բերքին ավելի շատ է լինում։

Ի՞նչից ե առաջ գալիս անտրաքնողը։ Անտրաքնողն ել առաջ ե գալիս մի այլ սնկի ազդեցությամբ։ Այդ սունկը միշտ դուեի սնկի նման մտնում է տերեկի, չվի, խաղողի մեջ և ծծում նրանց հյութը, վորի հետեանքով և հիվանդանում են վերջիններս։ Հիվանդացած տերեկների վրա, անտրաքնողի բծերի վերին յերեսին բարակ շերտով մոխրագույն փոշի յե առաջ գալիս. այդ փոշին կազմված ե անտրաքնողի սպուներից, վորոնցով հիվանդությունը տարածվում ե ամառվա ընթացքում։

Հիվանդության սունկը ձմեռում է չվի վերքերի մեջ, վորտեղից հետեւյալ գարնանը դուրս են գալիս նոր սպորներ, վորոնց միջոցով հիվանդությունը վերսկսվում է։

Ի՞նչպես պայքարել անտրաքնողի դեմ.՝ Քանի վոր հիվանդության սունկը ձմեռն անց է կացնում չվերի (հետագայում մատների) վերքերի մեջ, ապա կովելու ամենալավ միջոցը կլինի աշնանը կամ գարնանը, ետի ժամանակ (նայած թե՛ ետը գարնան են կատարում, թե աշնանը) անտրաքնողի վերքերը ունեցող բոլոր մատերը կտրելն և այրելը։ Անպատճառ այրել և փոչ թե թողնել։ Բայց միշտ հարավոր չի լինում վերք ունեցող բոլոր մատերը կտրել, յերբեմն ստիպված են լինում մի քանի մատեր թողնելու, վորոնց վրա անտրաքնողի վերքեր են լինում։ Այդ դեպքում վերքերին պիտի քսել մեկ հեկտոլիտր ջրի մեջ լուծած 35-40 կիլո յերկաթի արջասպի լուծույթ։ Յեթե ետը կատարում են աշնանը, այդ լուծույթը պիտի քսել հենց ետից հետո, իսկ յեթե ետը կատարում են գարնանը, պիտի քսել գարնանը, միայն պիտի քսել աչքերը բացվերուց գոնե 10 որ առաջ, վոր ուռած, բայց չբացված աչքերը լուծույթի աղդեցությունից չայրվեն։

Բացի գրանից, անտրաքնողի գեմ կարելի յև պայքարել թե՛ բորզոյան հեղուկ սրսկելով և թե՛ ծծումբ փչելով։ Յեթե վորեւ վայրում միաժամանակ պայքարում են և՛ միլդյույի և՛ ոիդիումի գեմ, ապա ամառվա ընթացքում անտրաքնողի գեմ հատուկ պայքար մզելու կարիք չկա։ Յերբեմն միայն հարկավոր ե միլդյույի և ոիդիումի համար ցույց տված ժամկետներից դուրս մի յերկու անդամ հավելյալ բժշկություն կատարել բորզոյան հեղուկով կամ ծծմբով։

Իսկ յեթե միլդյույի և ոիդիումի, մանավանդ վերջինիս

դեմ հատուկ պայքար չի տարվում և անհրաժեշտ է լինում
հատկապես անտրաքնողի դեմ պայքարելու, այդ դեպքում
բացի աշնան կամ վաղ դարնան յերկաթե արջասպով կատա-
րած բժշկությունից, պետք է աչքերը բացվելուց անմիջապես
հետո, յերբ վազի վրա ընդամենը 3-4 տերե և լինում՝ ծծումը
փչել։ Դրանից հետո ամեն յերկու շաբաթը մեկ անգամ ծծումը
փչել։ Յերկու-յերեք անգամ այդ ժամկետներով ծծումը փչե-
լով՝ կարել իյե կասեցնել անտրաքնողը։

Շատ անգամ ծծումը ին խառնում են կիր և այնպես սրբս-
կում։

Սկզբնական բժշկության ժամանակ մի կիրո ծծումը ին
խառնում են մի կիրո կիր, իսկ հետո մի կիրո ծծմբին կես կիրո
կիր (կիրը պիտի հանդած, փոշիացած լինի)։

Պետք է ասել, վոր կիրն անտրաքնողի դեմ կռվելու հա-
մար հատուկ նշանակություն չունի, ինչպես շատերն են կար-
ծում։ Առանց կրի յել ծծումը բն ավելի լավ կաղդի։ Կիրը խառ-
նում են միայն ծծումը տնտեսելու և բժշկությունն ավելի
եժան գարձնելու համար։



ՀՀ Ազգային գրադարան



NL0286598

20.085